

Շիզակօ, նոյեմբեր 15, 1979

Գերաշնորհ  
Տ. Քորզոմ Ս. Արքեպիսկոպոս Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք,

Սրբազան Հայր,

Խոնարհաբար Ձեզի կ' ուղարկենք երկու թղթակցութիւններ,

- 1.- եկեղեցւոյս 15ամեակի տօնախմբութեան
- 2.- Թատերական անդրանիկ ձեռնակին, զոյգ առիթներով զրի առնուած, կը հայցենք Ձերդ թանկագին տնօրինութիւնը զանոնք հրատարակուած տեսնելու Առաջնորդական պաշտօնաթերթիդ եւ հայ մամուլին մէջ :

Մօտալուա՝ Շնորհակալութեան Օրդան առիթով համեցէք ընդունիլ մեր սրտագին շնորհակարտութիւնները եւ բարի մաղթանքները Ձերդ քաջաողջութեան եւ Աստուածամոյ գործոց յաջողութեան համար:

Մնամ ի համբոյր Ձեր Ա. Աջոյն եւ որդիական սիրով

Խոնարհ ծառայ  
*[Handwritten Signature]*  
Հ. Ժիրայր Ա. Քաշմեն

*sent to Fr. Samsonian  
to be printed  
in "Dim. Church"  
12-7-79*

# PROGRAMME

## MERCHANT ARTIN AGHA

A  
play  
in three acts

written by  
YERVANT ODIAN and MICHAEL GURJIAN

directed by  
HAGOP DIRILEN

### CAST

Artin Agha	*****	GARO SAZIAN
Evpime	*****	ANI DIRILEN
Rose	*****	ANNA OZARTUN
Dr. Shavarsh	*****	SARKIS NAZARIAN
Karnig Agha	*****	HAROUT PAPAZIAN
Akribas Agha	*****	HAGOP DIRILEN
Diran	*****	SEBUH TOURIAN
Levon	*****	MASIS MIRICANIAN
Vahan	*****	BERJ PAPAZIAN
Rostov	*****	HOVIG DEMERJIAN
Police Sergeant	*****	ARTO HITIK
Nigohos Agha	*****	HOVIG DEMERJIAN
Sisag	*****	NERSES YAPOUJIAN
Policeman	*****	GARO TOURIAN
Another Policeman	*****	BERJ PAPAZIAN
Prompter	-----	SIBIL MIRICANIAN

# MERCHANT ARTIN AGHA

## ACTORS

ARTIN AGHA	A merchant in the bazaar
EVPIME	Artin Agha's wife
ROSE	Artin Agha's daughter
DR. SHAVARSH	A new graduate from medical school
KARNIG AGHA	Evpime's brother
AKRIBAS AGHA	Artin Agha's friend
DIRAN	Newspaper publisher
LEVON	A lawyer
VAHAN	A teacher
ROSTOV	An Armenian intellectual from Russia
NIGOHOS AGHA	A rich merchant in the bazaar
SISAG	Butler

## ACT I

Artin Agha and his wife Evpime are having a recurrent argument about Artin Agha's old fashioned habits and use of broken Armenian, in contrast to Evpime's modern, European ways.

When Artin Agha starts reminiscing about the "old days"; Rose and Evpime leave the room. Artin Agha becomes furious realizing that his audience is no longer there.

Later, Sisag, the butler, presents the dinner menu in formal Armenian; Artin Agha doesn't understand a word; Evpime has to translate it into Turkish.

Artin Agha has invited Akribas to meet Rose, for he thinks of Akribas as a suitable son-in-law. Evpime, on the other hand, has similar plans for a newly graduated physician. She invites Dr. Shavarsh with the pretense that Artin Agha is ill. Akribas comes in first. Dr. Shavarsh mistakes

him for the patient and convinces him that he has Typhoid fever. For Artin Agha, his diagnosis is appendicitis, which he claims is a sickness of the aristocrats. When Artin Agha points out that both his and Evpime's parents are common folks, Evpime faints.

## ACT II

Evpime, and, in turn, Artin Agha try to convince Rose that the right one for her is Dr. Shavarsh, and Akribas, respectively.

Evpime plans a formal reception for distinguished guests. Refusing to dress up, Artin Agha goes to bed instead of attending. Levon and Dr. Shavarsh are first to arrive; they try to impress each other. When Levon mentions that he is prosecuting a medical malpractice case, Dr. Shavarsh realizes that he is the physician involved!

After all the guests arrive, they start practising a play and make a lot of noise. Before long Artin Agha wakes up and kicks everybody out.

## ACT III

Alone in the room, Rose talks about her sweetheart. Karnig Agha brings her a letter from her sweetheart. Rose is happy at first; then she remembers Akribas and Dr. Shavarsh. Karnig Agha tells her they are both in trouble.

Sisag comes in to announce that Akribas has brought a box. Akribas leaves the box in the room and tells Karnig that he is going back to his village. After Akribas leaves, realizing that the box is open, Karnig discovers papers about the business.

A little later Dr. Shavarsh enters. Not noticing Karnig, he starts thinking out loud how to spend some time with Evpime to avoid the police. Evpime walks in and apologizes for the events at the reception. Shavarsh tells her he is leaving for Europe.

Sisag announces that a lawyer and police are there to search the house. Shavarsh hides in the box. Karnig sends Evpime out. The police search the house, ask questions, and finally decide to take the box with them. When they pick the box up, bottom falls; they arrest the doctor.

Now Artin Agha is worried that there is no one to marry Rose. Fortunately, Nigohos Agha arrives to match Rose and his partner Dikran who happens to be the man Rose loves. After another quarrel about what they like best about Dikran, both Artin Agha and Evpime agree that they have found the ideal husband for their daughter.

ԳՆԱՀԱՏԵԼԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ԵՒ

ՀԱՅ ԲԵՄԸ ՇԻԳԱԿՈՅԻ ՄԷՋ

Շիգակոհայ երկնակամարին վրայ առեն է մը ի վեր կեանքի ընականօրէն ղժուար պայմաններու հետեւանքով գրեթէ դադրած կը նկատուէր թատերագութիւնը, առանց սակայն նկատի առնելու տեղ տեղ եւ մասնակի ջանքերով կազմակերպուած ներկայացումները, որոնք այլապէս ալ դրական իրազդործումներ եղած կրնան ըլլալ, այս անգամ, շնորհիւ խումբ մը Շիգակոհայ երիտասարդներու կորովին եւ ջանքին, սառցացած կոյտը ճեղքուեցաւ, երեւան բերելով հայ երիտասարդութեան մօտ իրաւ արժէքները թատերական արուեստին:

Երկար ամիսներու եւ շաբաթներու յարատեւ փորձերը, յաղթահարելով նաեւ ամէն ղժուարութիւն, Շիգակոհայ թատերախումբը յաջողութեամբ պսակեց իր ջանքերը, թատերական հաճելի վայելք մը շնորհելով հայ թատերասէր հասարակութեան իրենց անդրանիկ ներկայացումով, առաջին անգամ ըլլալով հանդէս գալով Միքայէլ Կիւրճեանի եւ Երուանդ Օտեանի "Չարշըլը Արթին Աղա" կատակերգութեամբ, Կիրակի նոյեմբեր 11, 1979 կէսօրէն ետք ժամը 4.00ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ սրահին մէջ, որ կը վայելէր նաեւ հովանաւորութիւնը նոյն եկեղեցւոյ պատուարժան ծխական խորհուրդին:

Ողջունելի այս ներկայացման անգերագանցելի նախածեռնութիւնը կը պարտինք Տէր եւ Տիկին Յակոբ Տիրիլէնին, որոնք իբրեւ բեմադրիչ, իրենց յատուկ սիրով եւ շրջահայեցութեամբ յաջողեցան շուտով իրենց շուրջը հաւաքել խումբ մը տիպար հայ երիտասարդներ արթնցնելով գիրենք բունի երազէն եւ տալով ոսկի պատեհութիւնը պատասխանատուութիւն մը ստանձնելու եւ հասցնելու զայն կատարելութեան:

Դերակատարները, բոլորն ալ առանց բացառութեան իրենց խանդավառ մասնակցութեամբ ապահովեցին ոսկի ներդաշնակութիւնը ներկայացման: Անոնց կարգին իրենց անփոխարինելի դերերը ստանձնած էին եւ իրենց կատարողական բացառիկ արուեստասիրութեամբ հանդէս եկան Կարօ Սազեան, շուկայի մարդու եւ ընտանիքի հօր կատարեալ տիպար՝ "Արթին Աղա"-ի դերով, որուն տանտիկնոջ "Եւփիմէ"ի դերով Տիկին Անի Տիրիլէն, կատարելապէս կերպաւորեց ընդհանրապէս սալօններու մէջ երեւցող եւ ինքզինքնին զարգացած նկատող ժամանակի տանտիկիններու տիպարը: Ընտանիքի ղուստորին՝ "Ռոզի"ին դերով Օրիորդ Աննա Օզարթուն իրաւ յայտնութիւն մըն էր, բեմին վրայ ներկայացնելով գիտակից եւ պարկեշտ եւ ի մասնաւորի իր համոզումներուն վստահութիւնը ունեցող տիպար հայ Օրիորդը:

Երեք արարներու եւ տասնքերկու տեսիլներու յաջորդականութիւնով հայ թատերգութեան սիրահար երիտասարդներ իրենց յատուկ տիպարներով, զգեստաւորութեամբ, ծպտումներով եւ լուսավարութիւններով ապահովեցին ամբողջականութիւնը ներկայացման, իւրաքանչիւրը առանձին ի յայտ բերելով իր բնածին տաղանդը ժամանակի բարբերը ներկայացնելով գնահատելի արուեստասիրութեամբ:

Շիզակօհայ թատերասէր ընտրանին յոտնկայս եւ երկար ատեն ծափահարեց ազնիւ ջանքերով եւ անսակարկ նուիրումով նախածեոնուած աննախընթաց այս ծեոնարկը, աւելով իրաւ փաստը իր ամբողջականութեան պահպանման:

Մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնենք իրենց թատերական նախաքայլը առնող հայ տիպար երիտասարդութեան, եւ կը սպասենք նորանոր ներկայացումներ աւելի կատարելագործուած բեմերուն վրայ:

Նոյեմբեր 15, 1979

Շիզակօ,

Ներկայ մը

ՏԱՍՆԸ ՀԻՆԳԱՄԵԱԿ ՀԱՅՈՑ

Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ-ՇԻԳԱԿՕ

Մեծագոյն Շիգակոյի հայոց Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին տօնա-  
խմբեց իր նոր եկեղեցւոյ կառուցման եւ օծման Տասնըհինգամեակը նախա-  
զահուլթեամբ Ամերիկահայոց նախկին Առաջնորդ Բարձրաշնորհ Տ.Տիրան Ս.  
Արքեպիսկոպոս Ներսոյեանի Հոկտեմբեր 13-14, 1979ին:

Տարեդարձի հանդիսութիւնը սկսաւ ճոխ ընթրիքով մը եւ բժանդիր  
կարգապահուլթեամբ Շաբաթ, Հոկտ. 13, 1979 երեկոյեան ժամը 7.00ին:

Տասնըհինգամեակի յորելեանի յանձնախումբի Ատենապետ Տիար Գրիգոր  
Նահապետեան, հանգամանքով, հրաւիրեց սեղանակիցները ողջունելու ներկա-  
յութիւնը օրուան պատուոյ հիւրերուն յանձինս նոր եկեղեցւոյս կնքհայր  
Տէր եւ Տիկին Հայկ Բետեանի, Շիգակոյի քաղաքային խորհուրդի անդամ  
Տէր եւ Տիկին ծորճ Յակոբեանի եւ իր հիւրերը՝ Լոս Անճըլըսէն Ամերիկա-  
հայ Աւետարանիչ Տիմրս Շաքարեանը իր շքախումբով, Էվընսթընի Ս.Յակոբ  
Եկեղեցւոյ հովիւ Հայր Վարուժան Ծ.Վրդ.Գապառաճեանի, Ոգեկանի Ս.Գէորգ  
Եկեղեցւոյ Մատակարար Սարկաւազ Տիրացու Միքայէլ Չէվեանի եւ հայազգի  
համբաւաւոր ոսկրաբոյժ-վիրաբոյժ Տօքթ. եւ Տիկին Համբարձում Քելիկեանի  
եւ քազմաթիւ հիւրերու:

Պատուարժան ծխական խորհուրդի Ատենապետ Տիար Պետրոս Գըլճեան  
յանուն համայնքիս բարի զալուստ մաղթելէ ետք ներկաներուն եւ ի մասնա-  
ւորի իր զոհունակութիւնը յայտնեց մեր մէջ ունենալու հայ եկեղեցւոյ  
քազմամուտ հոգեւորականը, որուն Ս.Քահանայութեան ոսկեայ յորելեանին  
մենք եւս մեր յանգանքի եւ երախտագիտութեան բաժինը կը նուիրենք իր  
մէջէն ողջունելով նաեւ հայ նոր հոգեւորականութիւնը:

Գեղարուեստական բաժնին իր սիրայօժար մասնակցութիւնը բերաւ Շիգա-  
կօհայ սիրուած երգիչ՝ Սիրական Քերբոնեան, դաշնակի ընկերակցութեամբ  
Պր.Լի Մայրբի, փունջ մը հայկական եւ դասական երգերով:

Քաղաքազէտ Տիար ծորճ Յակոբեան ուղերձով իր զոհունակութիւնը յայտ-  
նեց իր ազգակիցներուն հետ գտնուելու, եւ ողջունեց իր եկեղեցին իր  
սրտին յատուկ զգացումներով եւ փոխանցելով նաեւ իր անձնական միջոցներով  
հանգանակուած պակկառելի գումարներ:

Նոր եկեղեցւոյս կնքհայր եւ Ազգային Բարերար Տիար Հայկ Բետեան  
իր զգացուած զոհունակութիւնը յայտնեց եւ ի մասնաւորի գնահատեց երիտա-  
սարդ սերունդին ստանձնած պատախանատութիւնը գովելի եկեղեցասիրութեամբ  
ուղիղ ժառանգորդը հանդիսանալու իրենց հայրերուն հոգեւոր կեանքին: Ապա  
կոչ ուղղեց ներկաներուն, կամաւոր եւ սրտաբուխ մոմավառութիւններով  
յառաջադրելու նորանոր տարեդարձներ լուսաւոր իրազործումներով:

Եկեղեցասէր Տիկնանց Միութեան գլխաւորութեամբ կարճ միջոցի մը ընթացքին մոմավառութենէն գոյացաւ շուրջ եօթը հազար տուար ի պայծառութիւն եկեղեցւոյս:

Ընդհանուր ոգեւորութեան եւ լուսաւորութեան մէջ հրաւիրուեցաւ եկեղեցւոյ հովիւը, որ երկու տարիէ ի վեր եկած է հովուելու Թափուր հովուութիւնը եկեղեցւոյս իր հովուական խօսքը ըսելու: Հոգշ. հայր սուրբը շնորհակալութիւն յայտնեց այս Թանկագին առիթին միասին գտնուելու եւ շնորհաւորեց իր եկեղեցւոյ անդամները, որոնք ջանք չեն խնայեր միշտ միասին ըլլալու իրենց Հօր տան մէջ, եւ կը շարունակեն մաքուր եկեղեցասիրութեամբ եւ լուսաւոր իրազործութիւններով տարածիչները ըլլալ հայ հաւատքին եւ ազգային ջերմեռանդութեան: Եւ մաղթեց որ ինչպէս իրենք, իրենց զաւակները եւս լուսաւոր իրազործումը ըլլան իրենց լոյս տեսիլքին: Ապա հրաւիրեց օրուան բարձրաստիճան հոգեւորականը, եւ Ամերիկահայոց նախկին բազմավաստակ Առաջնորդը եւ դաստիարակը հայ նոր հոգեւորականութեան տալու իր պատգամը:

Յոբելեար Սրբազան Հայրը, իրեն յատուկ հաղորդականութեամբ նախ շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած պատիւին համար եւ ըսաւ թէ իրեն եղած պատիւը իր անձին միջոցաւ կ'երթայ մեր Ս. եւ Առաքելական Եկեղեցիին որուն Աւագանէն ծնած լոյսի ծնունդներ ենք բոլորս, եւ կոչուած ենք լուսաւոր հաւատքով զարդարելու զայն, ինչպէս զարդարած են զինք դարեր առաջ նոյն Եկեղեցւոյ լուսատու զաւակները, որոնց տօնը այսօր Եկեղեցին յիշատակեց երախտագիտութեամբ: Յիշեց ան, իր կեանքին զանազան հանգրուանները, մանաւանդ սկզբնական շրջանի, երբ մեր ժողովուրդը արիւնաքամ եւ կոտորակուած, տարագրուած իր հայրենի սահմաններէն, զաղթականութեան նոր կայաններու մէջ իր նոր կեանքը կը սկսէր ընծիւղել: Փառք տուաւ նախախնամութեան որ շնորհիւ մեր ժողովուրդին մէջ անթեղուած հաւատքին եւ սրբազան կրակին, շուտով տէրը եղանք մեր անձերուն, եւ գրեթէ անկարելիութենէն նոր կարելիութիւններով կերտեցինք նոր եւ աւելի փառաւոր կոուաններ՝ Աստուծոյ մշտնջենական Լոյսին կարօտ սիրով եւ հաւատքով:

Յաջորդ օր Կիրակի, Հոկտեմբեր 14, 1979 առաւօտեան, Յոբելեար Սրբազան Հայրը իր քահանայական Ս. Պատարագը մատուցանեց եւ տուաւ մին իր ներշնչեալ բարոզներէն եւ յորդորեց իր հոգեւոր զաւակները շարունակել հաւատարիմ մնալու մեր Ս. Եկեղեցիին եւ Աստուծոյ, արժանի ըլլալու համար ընդունելու փառաց պսակը, զոր Տէրը խոստացած է բոլոր զինք սիրողներուն:

Յաւարտ Ս. Պատարագին մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հոգիներուն համար նախկին եկեղեցւոյս կնքահայր հանգուցեալ Սամուէլ



Տօնեանի, Եկեղեցւոյս քարերար Տիկին Մարի Պալեօզեանի եւ հանգուցեալ անդամներուն եւ կնքահայրերուն եւ համայն ազգիս հայոց հին եւ նոր ննջեցեալներուն համար: Եկեղեցական արարողութեան աւարտին հաւատացեալներ զգացուած հաւատքով եւ երկիւղածութեամբ ստացան Աստուծային օրհնութիւնը Յոբելեար Սրբազան Հօր Աջէն եւ մեկնեցան խաղաղութեամբ վերանորոգուած հաւատքով :

Թող Աստուած օրհնէ համայն երախտաւոր անդամները իր Ս.Եկեղեցիին եւ իրեն մշտնջենական փառք ըլլայ.ամէն:

Նոյեմբեր 15, 1979  
Շիզակօ

Թղթակից

**Milestones of the  
Parish of St. Gregory  
The Illuminator Armenian  
Church of Chicago**

1917	Formation of Chicago Parish
1926	Consecration of St. Gregory The Illuminator Armenian Church
October 4, 1964	Consecration of New Church
January, 1966	Father Sarkis Kashikjian transferred from Philadelphia to assume Pastorate
October 6, 1968	Mortgage Burned on 4th Anniversary
January 10, 1973	Father Sarkis Kashikjian passed away
January, 1973 - November, 1977	Very Reverend Varoujan Dz.V. Kabaradjian assigned as Visiting Clergy
January, 1974	Michael Ohanessian assigned as Deacon-in-Charge
November, 1977	Father Jirayr Tashjian arrives from Milan, Italy and assumes Pastorate
October 13, 1979	Celebration of 15th Anniversary of New Church

**15th Anniversary  
Celebration  
of**

***St. Gregory The Illuminator  
Armenian Church of Chicago***

***and***

***50th Anniversary  
of the Ordination and Consecration  
to Holy Priesthood  
of  
The Most Reverend  
Archbishop Tiran Nersoyan***

***Saturday, October 13, 1979***

***St. Gregory Cultural Hall  
6700 West Diversey  
Chicago, Illinois***

# Program

## Menu

Tossed Garden Greens  
Roast Prime Rib of Beef  
Baby Belgian Carrots  
with Green Grapes  
Baked Idaho Potato  
Sour Cream  
Crescent Rolls  
Strawberry Romanoff  
Coffee - Tea

<i>Invocation</i>	<i>Very Reverend Varoujan Dz.v. Kabaradjian</i>
<i>Welcome</i>	<i>Mr. Peter Klujian Chairman, Parish Council</i>
<i>Master of Ceremonies</i>	<i>Mr. George M. Nahabedian</i>
<i>Vocal Soloist</i>	<i>Mr. Siragan Kerkonian Accompanied by Mr. Lee Meyer</i>
<i>Remarks</i>	<i>Mr. George Hagopian Alderman - 30th Ward</i>
<i>Candle Lighting Ceremony</i>	<i>Mr. Haig Pedian Godfather - St. Gregory</i>
<i>Remarks</i>	<i>Very Reverend Jirayr Tashjian, Parish Priest - St. Gregory</i>
<i>Guest of Honor</i>	<i>His Eminence Archbishop Tiran Nersoyan</i>
<i>Benediction</i>	<i>His Eminence Archbishop Tiran Nersoyan</i>

\* \* \* \* \*

## Dance

*Featuring the*

*Johnites of Detroit, Michigan*